# ԶԱՐԵՏԱԿՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԱՑԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲՈՒՄԲՈՒԼԻ

Գ. Պոլիս. — Տպագր. Դ. Պաղտասարեան (Ա.Ի.)

1887

793

# ՀԱՅԵՐԻՍԿՈՒԹԻՒՆ ԳՈՒՇԱԿԱՆ ԿԻՍԱՓԱՅԼ

Հ 1979

Կ. Պոլիս. — Տպագր. Գ. Պաղտասլեան (Ար.)
1887

ԼՍԵԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒՆԵՍԿՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

# 1887

Գիր տարւոյն է Անկուտեաց · Առևկուլութիւն
Վերադիրն . . . . . Քօքօզութիւն.
Եօթներեակն . . . . . Մանթարաբա-
նութիւն.
Տանուտէրն . . . . . Անօթութիւն.
Ձեռք կայ մէկ . . . . . Փոխառութիւն
Գումար ընդհանուր . . . . Սնանկութիւն։

—

Բուն ձայնքն ա՛խ , վա՛խ, օ՛ֆ , բիւ՛ֆ , քօքօզական դասուն են, սկսեալ ի տարեգլխէ։

—

## ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆՔ ԱՆԿՈՒՏԵԱՑ

Օր մոխրոց ՝ ( Ծոմ ) . . Բրշ։
Օր սատէ հայի . . . . Գրշ.
Օր զէյթին հացի . . . Դրշ.
Օր կալէթայի . . . . . Եբշ.
Օր սիմիթի . . . . . Ուր.
Օր պանիր հացի . . . Շբբ.
Օր իշկէմպէ չօրպասիի . Դիր.

—

Տարեգլուխն քօքօզաց որ է յաւելման թըւական՝ բաթլիճանական (քէսատական) ամսուն լինիցի։ Իսկ Զատիկ նոցա ոչ դոյ։

## ԽԱՒԱՐՄՈՒՆՔ

Յայսմ ամի սիրտք և քսակք անկուտեաց տիւ և գիշեր լինին խաւար, անտեսանելի ի կուտաւորաց։

## ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

Յայսմ ամի ի շնորհս անուշադիր մարդկանց մանաւանդ կանանց մէկ քանի անգամ հրդեհ պիտի պատահի. զամենեսեանս Տէրը ի փորձանաց պահեսցէ։

Ամէն օր քաղաքապետական քննիչ պաշտօնեայք ծախուելու վրայ եղող պակաս հացերը ժողուելով աղքատաց պիտի բաժնեն. յայնմ ժամանակի դէմք թապլաքեարացն քիւլագոյն իսկ տնանկացն կիւլագոյն եղիցին։

Յաճախորդաց շատերը կշիռը հետերնին պիտի պտտցունեն, զի խանութ դլուխ քաղաքապետական պաշտօնեայ մը կեցնելու անհընարութենէն՝ խիղճ չունեցող խանութպանք աչք գոցել բանալու միջոցին ուղածնին կընեն կոր։

Փողոցները շրջող խանութպանը ալ քննիչ պաշտօնեաներէ յանկարծակիի չգալու համար դրպաններուն մէջ կամ կրնակնին պիտի պահեն հին քաշերու տրաքները՝ որոց յատակները էյէլէնմիշ եղած է։ Այս խանութպաններու տրամին կամ չափին ուշադրութիւն չընող տիկնայք քիչ չպիտի խաբուին։

Նշանաւոր բաթլիճանի ամսոյն առթիւ առևտրական հրապարակներու մէջ այս տարի ևս խրվռղվռական թօքճիներ պիտի պատահին ։

Չափէն աւելի ուռեցած թիւռնիւռները մաքսախուղից քննութեանը պիտի ենթարկվին .

Հնչակ այս տարի ևս հարիւրվճարող բաժանորդ, և հազար ալ օթլախճի բաժանորդ պիտի ունենայ.

## Յունվար 1

Այսօր դասք ուսուցչաց, աշակերտաց և սիմիթճոց ուրախանան ընդ ճգնութիւն տարեդարձին օրացուցական։ Տօն ճիւնիւնեանց, որք ի վերայ եօթն բախիւ յաւելուն ըզգէռօս բազումս։

Զէրտէ բեւթէ ֆուռթունասը։

## Յունվար 5

Տօն ֆրունճոց, յաղագս վաճառելոյ ըզեաղը չէօրէկն, որոյ ի ներքոյ փակեալ թըղթոյն տառան կշռի յիսուն սիրէճն։

## Յունվար 6

Նախանձորդք ոմանք կամաւ անկանին ի ծով գինեհար՝ և ելանեն դողահար։

Ախորժելի աւուրք գինեպանաց։

## Յունվար 15

Սկիզբն առատութեան սուարէ-տանսանց վան-տօնախմբութեանց պաթիսթից և ժանց։

Թեթեւային պարզութիւնք սիրահարային ի տեղիս տեղիս։

## Քեռրվար 1

Ամենէն թերթիպ հանդէսք հարսանեկան անճարակաց։

Ախորժելի աւուրք անուշեղինավաճառաց։

Քսակային պարզութիւնք։

## Քեռրվար 15

Պարասրահք, թատրոնք, պողոտայք և մէյտանք լի են բազմութեամբ. Ամենկոտք դիմակաւորեալ շրջին գունդագունդ. սոքա ի փոքուց և ի մեծաց «մասկարա» կոչին։ Բաքլավաճիք և քատայիֆճիք ապրանք ծախելէն գլուխ քերելու ժամանակ չունին։

Ցայսմ գիշերի մեծ ոճն է խուռուռ զահրէճոց որ յետ պատրաստելոյ ըզ բիշիեն և ըզ շիշիրէն ֆասուլեան՝ մինչև առաւօտ աշխատին սրբել զտրամս և զթէրազիս, պէլքի ալ էյէլէմիշ ընել։

## Քեռրվար 16

Ելանեն ի թափոր ամենայն սիւբիւրկէճիք և արինաճիք մեծաձայն հրաւիրել ըզյաճախորդուհիս տնտեսագէտս որք յաւելեալ կերակրօք թռամբտ առնեն ըզ սիւբիւրկէս

և զարմնաս։ Կանաչեղինավաճառք խօվայիւք արկեալ ըղձուր ի վերայ ապրանացն՝ սարսափաձայն գովեն ըզ զավղալաթս։ Կաթավաճառք ըզթահիսն և ըզ խայմախն ի միասին վաճառեսցեն։

## Փետրվար 18

Սուգ ի գինեմոլս և ի կռուարարս որք ճգնեն յանկիւնս բանտաց. սոքա, որք յաւուրըս բարեկենդանական անառակութեամբ անցուցին՝ այսօր ի ձայնից վառտիանաց յուշաբերին և արբաճի խումբուսու-վարի ըզմտաւ ածեն տուժելիքնին։

## Փետրվար 18—Ապրիլ 1

Ախորժելի աւուրք կամաւ հիւանդանալոյ խոստովանահարց ոմանց, որք համոզեն լօլոզեն ըզժողովուրդս պահս բռնել և ինքեանք ճաշակեն ըզ պատուական քիւլպաստրն գբվրռճըքի և ըզ պատուական եալանճի տօլմասին ընդ լահանա թուրշուսի։

## Փետրվար 25

Ցարեղարձ աճիւղէից ցլտոյն. կծկտուն

պառաւանց յանկիւնս տանց, առ ահի խշմին գալոյ աճիւղէ ցրտոյն՝ որ վասն իւրեանց փըչեսցի և եօթն տիւ և ութ գիշեր տեւեսցի։

Մարտ 1

Ցիշատակ անառակաց, խևաց և շոշորթաց։

Ցրդ տարեդարձ ծննդեան հաւաքման արհեստին նեռեալ սիկառաց ի պողոտայից և ի սրճարանաց։

Մարտ 11

Միջին.ք մեծ պահոց. պատրաստութիւն.ք նորաձևութեանց։ Փոթորիկ.ք ի տունս.

Տօթագին աւուր.ք դերձակուհեաց։

Մարտ 25

Սուգ ի ծով. մեծ կոտորած ձկանց։

Մարտ 29

Տարեդարձ այլակերպութեան «ծաղկազարդ» բառին «զարզարդար» ի։ Սկիզբն ընթերցման և վաւերացման բամբասագրոց ի վերնատունս և ի պահարանս կանանց կողմի։

Ապրիլ 1

Տօն տխմարաց, կամկարաց և սէրսէմաց.

Ա. տարեդարձ էսէֆէնկիղաբար կամաւ

խաբուելոյ հռչակաւոր հրապարակախօսի մը ուրուք, կո՛ւկուկ։

## Ապրիլ 5

Զատիկ. սպառու



հաւկթաց և հաղորդութիւն։

(Այս տարի լատինացւոց Զատիկը մեզի հետ չի գալուն՝ անանկ անցած տարուան պէս հաւկթի առատութիւն չի կայ . . . եկեղեցեաց դռներու առջև.)

## Ապրիլ 6

Ցայսմ աւուր ըստ հնաւանդ սովորութեան կռիւ ծագեսցի ընդ մէջ հաւկթամիտ հաւկթատօխուշանաց որ ի տօնավաճառն Բերայի, և որք միջամտեն՝ ճըլխացեալ հաւկթի հանդիպիցին. ի սմին աւուր «կէ՛լ դանթարա, կէ՛լ գանթարա» պոռացողաց ըղ կշիռս տամկաորդ ժողովեսցի ի քննչաց և «կէ՛լ սամկայա, կէ՛լ ճէզայա» գոչեսցի։

Եւմուրլթա տօգուշու Ֆրրթնասը։

## Ապրիլ 7

Ամպամած և խոնաւ հօրիզոնն տօնավաճառին էյրի գաբուլի. անհրաժեշտ փոթորիկք ի տօխուշանս չալապուրաց. տուգանք կրե-

ւարարաց, կոտորածք շիշոց, այլ դրամք զբ-
ւարթագին սաւառնին ի քսակս չալապուրիճոց

## Ապրիլ 10

Տօն պալըգլը բանայիրին, օդն ըսա սո-
վորութեան անձրևէ և ըզբանայիրն տակնու-
վերայ առնէ։

Ճիւնիւն տէօքիւնթիւսի ֆուռթունասը։

## Ապրիլ 12

Պէլքի անձրևն շարունակէ, հասքէօյի բա-
նայիրն ալ հապիկը կըլլէ և տօլապճին ըզ
տօլապն իւր դարձնել ոչ կարէ։

Տօլապ տէօնմէզ ֆըրթնասը ի զայրացեալ
գինեպանս։

## Ապրիլ 23

Ելանեն ամենայն զբօսասէրք ի զբօսա-
վայրս, զի է Խըտրէլլէզ։ Սկիզբն ախորժելի
աւուրց սաթըճոց սուղավաճառաց։

## Մայիս 1

Կիւյիւմք կաթալաճառաց եղիցին մուայ-
եէնէ, և ջրախառնակաթ կիւյիւմն վաճառո-
ղին գլուխն անցանէ։

Իշմարաբանական սիրահարութիւնք ընդ-
ծառովք ի տեղիս տեղիս։

## Մայիս 15

Տօն Եէտի-դուլէի Եօթնաշտարակին. ըստ-պառու�հաղարաւոր մառուլաց ի պօստանաց։ Մանր-մունր սիրահարութիւնք ընդ. պօստան տօլապովք։

## Մայիս 21

Այսօր դասք բամբասասէր տիկնանց և սիրահարեալ երիտասարդաց ուրախանան ընդ ճգնութիւն մատաթեայ առաքելոյն և վիճակս արկանեն ասելով, «Հանէ աղջիկս հանէ»։

## Մայիս 31

Առաջին պսակ. Սկիզբն առատութեան ամուսնական կռուոց.

Տօն սահմանադրական տարեդարձին. սարտէլա-վարի իստիֆք հանդիսականաց ի վակօնս շմէնտրֆէռին, յորոց ոմանց դատակքն աճէլէյով գալք-կիտէլիմ եղիցին. եւ յերեկոյին ի տեղիս տեղիս մեծ կոտորած քէստանէ կամ հավայի ֆիշէնկին, պա՛մ, պո՛ւմ, կռ՛ռ, չա՛թ, տա՛ն, տո՛ւն, բո՛ւմ, ֆը՛ս, դը՛սս։

## Յունիս 1

Հարսանեկան պատրաստութիւնք ի ձեղն գնչուեաց որք զբաւական դրամս չբրբմիշ ընելոց ի ցեն յաղդասէր.՝ սահմանադրասէր.՝

չբրբբայէ դուրս էյնալիք ոմանց ի տօնավաճառն չբրբբճը չայիրիի։

Յունիս 15

Կուռկուռաձայն իրարանցումն ամպոց, շախշախաձայն անձրևք, շալակաբարձ անցանիցին ոմանք ընդ ծովս փողոցաց.

Յուլիս 12

Ախորժելի օր թուլումպաճաց որք փորձեն զթուլումպայս և զխօռթումս. Ցարեդարձ զիրար թրջելոյ թեթեւութեամբ ծանրաբեռնեալ երիտասարդաց և ուհեաց.

Յուլիս 17

Սամեէլի, որ տևէ ութն տիւ եւ ութ գիշեր։

Յուլիս 23

Յայսմ գիշերի կատարի այրումն չալըչբբոց. Հուր բորբոքին մանթարացեալ մակոյք և նաւակք, զի է աթէշ կէճէսի.

Օգոստոս 1—31

Բազմանալով բազմացին դասք շոշորդաց ի տապոյ արեգական.

(Եռամսեայ դադար, բաթլիճան այլարը։ Սկիզբն առատութեան անկուտեաց ի քէսատութենէ։ Տօնք խրվռզվռական թօրճաց.)

Դեկտեմբեր 1

Բքաբեր հողմունք. մզմզումն մատանց և քթերու ծայրից.

Ցամսեանն դեկտեմբերի երիտասարդք և կուսանք լինին մահմուռ պագըշը, զի յաղագս տօնախմբութեանց արբեցողութիւն կամ քնհատութիւն չափէ աւելի լինի.

Դեկտեմբեր 28

Ջուարթագին աւուրք մրգավաճառաց. պարզութիւնք և թեթևութիւնք քսակային,

Դեկտեմբեր 31

Թնդանօթարձակամիտ վաճառականք թափեն ըզճիգս, ըզհանճարս և ըզբանճարս, վասն բանալոյ ըզդոցս տեսրակաց, զի մարդ է որ գործէ զերկիր և ըզշէյթան-պէզին.

Ցայսմ գիշերի աւետարարք տարեգլխոյն Բոժոժահար և թմբկահար աւետեն ըզկաղանդն 1888ի, գոչելով հազար-բերան «այ վասիլիս էրքէթէ, շատ տարիներու հասցնէ։»

ԱՄԷՆ

# ՄԱՂԹԱՆՔ

Աւասիկ պարոն, հին տարին տարի
Եւ անոր տեղը բերի նոր տարի,
'Ի սրտէ մաղթեմ որ այս նոր տարի
Քեզ համար ըլլայ յաջող ու բարի։

Բայց թէ որ ելնէ հոգիդ այս տարի
Խենդ բաներ ուզէ ու սիրահարի՝
Եւ փորձանք պակաս չըլլայ քու գլխէդ՝
Ցանձանքն իմն չէ եւ ոչ մէկ տարի։

Թէ խելքիդ փչէ ելնես այս տարի
Վնաս հասցընել եղբօրս Հնչակի,
Կարդալով նորա թերթերն անկուտի՝
Արժէք չունենաս 30 փարայի։

Թէ երազիդ մէջ ըսեն այս տարի
Ֆօնտս ծախողին քսակ պարարի,
Դուն ալ հաւատալով ունեցածդ տաս՝
Կարօտ պիտ'ըլլաս հացի պատառի։

Թէ երեսփոխան ըլլաս այս տարի
Որուն կը ցանկաս, վարձքդ կատարի,
Փառք վաստակելու համար պոռչտես
Քրտնիս պաղիս, ճայնդ ալ կը մարի։

Թէ դուն զքեզ տաս խաղի այս տարի
Թուղթի պիլեայի, թավլուլի զարի,
Եւ անցնի տարիդ դեռ դուն չիմացած՝
Կը հասնի ձեռադ հարիւր հազարի։

Թէ դուն չտեսար քու գործդ այս տարի
Եւ յանձնեցիր զայն ձեռքը նոտարի,
Ան քեզ կողոպտեց մօրէ մերկ թողուց
Ցանձանքն իմս չէ եւ ոչ մէկ տարի։

Թէ փինտռելով մնտան այս տարի
Մտնես խանութը ըստակ չորթողի,
Աս ալ տուր ըսես, ան ալ տուր ըսես՝
Տաս քու ոսկիներդ կը խաբուիս կարի։

Թէ գինին, օղին, քօնեաքն այս տարի
Խմես անխնայ պէս դեղի ճարի,
Կուռենաս յանկարծ, լեզուդ բռնըվի
Եւ երակներուդ զարկը կը դադրի։

Թէ չի հաշուես շահդ ու ծախքդ այս տարի
Եւ տարեգլխուն չիգայ ծայր ծարի,
Առնելիք չունիս ու պարտք ունենաս՝
Ցանցանքն իմս չէ եւ ոչ մէկ տարի։

Իմ մաղթանքներս են պա՛րոն այս տարի,
Որ ըլլաս բարի եւ տէր հանճարի,
Աստուած չի ցուցնէ որ դուն ալ ես ալ
Դէմդ դէմ ելնենք նորէն այս տարի

ԿՈՒՐԻ, ԿՈՒԼԻ, ԽՈՒԼԻ։

ԲՈՈԺԻԿԺ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՈՒՆԴԱՄԵՆՏԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

A 59759

Գին 40 բարա

Կեդրոնատեղին է Գ. Պաղտասլեան գրատունը
Կ. Պոլիս Ցակոբեան Խան Թիւ 13

Կը Ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։

Շատ առնողներու համար մասնաւոր զեղչ։

معارف نظارت جلیله‌سنك ۹۵۵ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Ա II 59759

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
330050750